Ծուշանիկ Կուրղինյան

Երկու դիակ

Ցուրտ շիրիմներում՝ փորված իրար մոտ,
Պատահան միմյանց երկու չոր դիակ .
Մեկը խիստ հաստ էր, շերտավոր ճարպոտ,
Մյուսը՝ սաստիկ նիհար ու բարակ . . .
Լսիր, բարեկամ, ձայնեց այն տոգած
Դիակն իր կողքի մոտիկ պառկողին,
Երկուսս էլ դիակ, երկուսս էլ մեռած,
Հանձնվեցինք հավերժ այս դաժան հողին:
Սակայն դու պառկել հանգիստ, անվրդով,
Նայում ես լռիկ մարմնիդ փթելուն,
Ես՝ ծանրաբեռնված անհամար որդով
Տանջվում եմ անձայն քանց գերին-հլուն . . .
Ա՜հ, այս է եղել ունայն աշխարհից
Հեռացողներին մի հանգստավայր . . .
Բայց ո՛չ քեզ համար,
Երկրորդ շիրիմից
Ասաց խստագին դիակն այն բարակ,
Այն լույս աշխարհում դու, որ բախտավոր,
Միշտ բոնի ուժով շինեցիր ճարակ
Լայն աղիքներիդ զոհեր բյուրավոր .
Հյութերը մարդկանց անվաստակ քրտինք .
Արցունքը աղի, արյունն ալ-կարմիր,
Տենչերը ազատ զորության կնիք

Բնազդով նանիր
Կերար-ծծեցիր .
Քո բաժին բեռը՝ անզորի ուսին,
Ուժով տկարի հացը խլեցիր,
Եվ ճարպոտ մարմնովդ դեմ կանգնար լույսին,
Լույսին ոխերիմ,—
Այստեղ հողի տակ ինձ հետ հավասար
Պիտ լուծվես, փթես, անկուշտ որդերին
Շերտերդ ճարպի որպես ճոխ պաշար,
Պիտ ծծվեն լափվեն . . .
Հա՛, հա՛, հա՛ . . . իսկ դո՞ւ, որ քաղցած ծնար,
Քաղցած էլ մեռար,
Որդերն էլ քեզնից օգուտ չստացան . . .
— Ինձանից օգուտ ես այլ որդերի
Տվի բավական,
Որոնք միշտ սովոր կուշտ ու զեխ կյանքին
Առան իմ հոգին,
Երբ ես չուզեցի փորին հացկատակ
Լինել հպատակ . . .

1907 թ. 31 հոկտեմբերի